

ԿՈՆԴԱԿ

ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՌԱՅ Տ. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ՇՆՈՐՀԱԿ
ԱՄԵՆԱՍԱՌՈՒԲԲ ՀՈԳԻՆՑՆ ՊՈ.ՏՐԻՈ.ՐՔ Ա.ՌԱ.ՔԵԼ.Ա.ԿՈ.Ն ՍՈՒՐԲ ԱԹՈՌՈՅՑ
ԵՐՈՒՍԱԼ.Ա.ԿՄԻ, ՎԵՐՍ.ՏԵՍՈՒԶ ՍՈՒՐԲ ԵՒ ՏՆՈՐԻՆԱԿՈ.Ն ՏԵՂ.ԵՍ.ՅՆ
ՔՐԻՍՏՈՍԻ, ՅՈՐՄԷ ՀՈ.ՍՑԷ ՇՆՈՐՀԱՔ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ Ի ՎԵՐՈ.Յ ՍԻ-
ՐԵՑԵԱԼ ԵՂ.ԲՈՐ ԵՒ Ա.ՇԱ.ԿԵՐՏԻ ՄԵՐՈՑ ԳԵՐՍ.ՇՆՈՐՀ Տ. Գ.Ա.ՐԵԳԻՒՆ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Գ.Ա.ԶԱՆՃԵՍՈՆԻ, Ա.ՌԱ.ԶՆՈՐԴԻՒՆ Ա.ԻՍՈՒՐՈ.ԼԻՑ ԵՒ ՆՈՐ
ԶԵԼ.Ա.ՆՏԱ.ՅԻ :

Գերաքնորն եւ Արքելի Արքազան

Ուրախութեամբ է որ կը միացնենք Մեր սրազեղ ընորհաւորականը
Աւատալիոյ եւ նոր Զելանտայի Թեմական Խորհուրդներու եւ ժողովուրդի ե-
րախտագիտութեան, Զեր ժահանայական ձեռնադրութեան երեսնամեայ յոթել-
եանին առիրով: Երեսուն տարիներու Զեր անխափան ծառայութիւնը, կո-
չումներու ամենէն ազնուազոյնին, Զեզ արժանի թրին այս տօնակատարու-
թեան: Ժողովաւրդն է որ կը բերէ իր սէրն ու ակնածանը, անոր համբոյը
բաղը է եւ անջնջելի, անոր բերած պսակը չի բառամիր:

Հակառակ այժմու Զեր հասուն տարիքին եւ ընորհներուն, Զեր անխոնց
ու նուրբեալ զործունէութեան մեր Եկեղեցական, կրթական եւ հանրային
ասպարէզներուն մէջ, որոնց մօսէն տեղեակ եմ, Դուք կը մնաք ինձի համար
այն ժաղդր եւ աշխոյժ պատաճին, որ տարիներ առաջ ներս կը մննէր Երու-
սաղէմի ժառանգաւորաց Վարժարանէն, որուն Տնառչն էի այդ օրերուն: Սյս
պարագան մասնէլու տարազ մը ըլլալէ աւելի, անջնջ պատկեր մըն է
իմ մէջու: Սնիհասնելի են մերին նամբաները: Քաղցր է անցեալը, երբ մա-
նաւանդ ներկայի պսակը կ'ընդունի:

Տարիները անցուցին եւ յարդարեցին նոզիիդ անդաստանը եւ առա-
սցուցին միտիդ տեսութիւնը, եւ մեր ժողովուրդի ծով կարիքներն ու սէրը
զօսեպնդեցին եւ զօրացուցին Զեզի, անվարան առաջնորդիլու պարտի նամ-
բայէն, որ ծառայութիւնն էր մեր Եկեղեցիին եւ ժողովուրդին: Ըրիք Զեր
կեանի անզնիկի զոհը, ծառայութեան կարմիր ուխտը: Տրտմանու նայուածք-
նիդ ծանրացաւ զերազոյն տեսիլովը, որ կեանն ու երազը կազմեց մեր Եկե-
ղեցիին ու Ցեղին մեծ երախտաւորեալներուն: Ըրիք ինչ որ կարելի էր ընել,
ցաւակից եղաք ուրիշներուն, մրին նոզիներու խորը վառելով յուսին կայծը:

Քաղցր է Եկեղեցականին համար պահը՝ երբ կը ըշապառուի ամ իր
նոզեւոր հարազաներովը: Երբ հօսն ու հովիւը հովեովի կու զան, պայմանա-

Ս. Էջմիածին, Ս. Զատկի 1980

Նորին Սմենապատուոթիւն

Տ. Եղիշէ Արքեպիսկոպոս Տէրտէրեան

Պատրիարք Երուսաղէմի Հայոց

Երուսաղէմ

Սիրեցեալ Եղբայր մեր,

Այսօր, վերստին կանգնած Յիսուսի դատարկ զերեզմանին առջեւ, սուրբ առաքելութեան հաւատով զերմացած սրբով անգամ մը եւս կը խոսնվանինք թէ նուարտապէս «յարեաւ Քրիստոս ի մեռելոց», մահուամբ մահը յաղթեց եւ իր յարութեամբ կեանք պարզեւեց աշխարհի մարդոց, մեզի բոլորին:

Յիսուսի յարութիւնը զերազոյն գրաւականն է կեանի ուժերու յաղթանակին՝ ընդդէմ մահուան, բարւոյ ու արդարութեան յաղթանակին՝ ընդդէմ մեղքին ու չարին, սիրոյ եւ խաղաղութեան յաղթանակին՝ ընդդէմ ատելավառ ու խոռվարար արարքներու:

Սուրբ Զատկի այս առաւտօնուն, Յիսուսի յարութեան աւետիսով բող ցնձայ մեր Մայր Եկեղեցին, եւ մեր հաւատացեալ զաւակներու կեանքն ու ձեռաց զործերը բող լուսաւորուին յարութեան ուրախութեան հառազարումով:

Յարուցեալ Փրկչին մեր Յիսուսի Քրիստոսի Խման Սուրբ Սեղանէն եւ Սուրբ Գրական Արարատեան հայոց աշխարհին, Զերդ Սմենապատուոթեան եւ Սուրբ Արքուիդ զինուորեալ Միաբանութեան, ձեր բոլոր Եկեղեցիներուն ու համայն ժողովուրդին՝ մեծ աւետիս՝ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

Ենորին նրանակի յարութեան Քրիստոսի Եղիցին ընդ ձեզ այժմ եւ յափեան: Սմէն:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

Վ. Ա. Զ Գ Ե Ն Ս.
ԿՈՂՋԱԿՈՎ Ս. ՄԵՆԱՑՆ Հ. Ա. Յ Ա Ց

տրելու փոխադարձ յարգանիք եւ սիրոյ առիթը, մեծարելու համար Եկեղեցւոյ զաղափարը եւ Քրիստոնեութեան խորհուրդը:

Այժմ Զեր եւեսուն ասրիներու արդիւնաւոր դէզին վրայ կեցած՝ կրթնամ ըսել սաղմուներգուին նես «Եղի ես ծառ պտղալից ի տան Աստուծոյ»:

Երկար ապրիք, սիրելի Մթազան, աւելի առաօրէն արդիւնաւորելու Զեր կարողութիւնները յօդու մեր Եկեղեցին եւ ժողովուրդին: Ընդունեցէք անգամ մը եւս անկեղծ սիրոյս հաւասիքը եւ զերմ համբոյրը Զեր պայծառ հակատին:

Եղբայրական սիրով

Աղօքակից

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊՈՍ. ՏԵՐՏԵՐԵԱՆ
Պատրիարք Հայ Երուսաղէմի